

# ԱՐԵՆՆ ՎՐԷՓ ԵՒ ՓՐԿԱՆԻՐ

(Տեսութիւն հայ սովորութեան իրաւունքից)

## Խ. ՍԱՄՈՒԷԼԵԱՆԻ

### I

Նախնական իրաւունքի հետաքրքիր երևոյթներէց մէկն արեան վրէժի սովորութիւնն է: Դա ժողովուրդների սովորութեան իրաւունքի մէջ ընդհանրական բնաւորութիւն է կրում. դա նրանց իրաւաբանական գիտակցութեան առաջի յայտնութիւնն է: Դա այն հիւմքն է, որից յետագայում կամաց կամաց աճել է ժամանակակից կուլտուրական մարդկութեան քրէական իրաւունքը:

Հենց այն փաստը, որ արեան վրէժը տեղի է ունենում գրեթէ բոլոր երիտասարդ ժողովուրդների մէջ և որ այդպիսի շրջան անցնում են իրենց կուլտուրական զարգացման թէ կարճ և թէ երկար ճանապարհին բոլոր ժողովուրդները, հենց այդ փաստը մատնացոյց է սննում, որ արեան վրէժի վրայ պէտք է նայենք ոչ իբրև սպանութիւնների վայրենի, բարբարոս ու անսանձ մի ծարաւի, այլ մի բարձր, վեհ բանի վրայ: Այդտեղ տեսնելու ենք առաջին հիմնական եղանակը, թէ ինչպէս է հարկաւոր սպանութիւնների գէտքերում մարդկային իրաւունքը պաշտպանել:

Ժողովրդական իրաւաբանական հիմնարկութիւններն հետազօտելիս, իւրաքանչիւր ուսումնասիրողի աչքին է

զարնում մի ընտրոշ երևայթ. ամենուրեք, ուր հասարակական կազմակերպութիւնները տակաւին հիմնուած են արեւնակից ազգակցութեան վրայ, այնտեղ անպայման գոյութիւն ունի և արեան վրէժը: Վերջինս ծագում է իբրև մի պարտաւորութիւն, սրբազան հոգևոր պարտք, որ ի կատար է ածում մօտակայ ժառանգը և կամ եթէ նա չկայ՝ նրա արեւնակից սերնդի մօտակայ ազգականը: Սերունդը կամ սերնդային միութիւնները, հիմնուած լինելով արեւնակցութեան սկզբունքի վրայ, իրենց հասարակական կազմին վերաբերեալ բոլոր կենսական երևայթները սրբազործում են և վերածում կրօնական պաշտամունքների, որոնք խտրել պահանջում են արեւնակից ազգականներից, սերունդ կազմող անդամներից, հետևապէս արեան վրէժը սերտ կապուած է ժողովուրդների կրօնական աշխարհայեցողութեան, մանաւանդ մեռեալների պաշտամունքի հետ: Սպանուածն երբէք հանգիստ չի գտնի այն աշխարհում, մինչև որ վրէժը չիրականանայ, մինչև որ նրան մահ պատճառողը իւր սեփական արեամբ չի մաքրիլ կատարած սպանութեան մեղքը: Լինի այդ վրէժը մեր ժամանակակից կորսիկացիների vendeta-ն կամ հին հռոմէացոց necis vindicta. լինի դա հին մովսիսական gōel haddām կամ հին յունական ἀνδραγαθία. լինի դա հին սլաւոնական ու գերմանական ցեղերի կամ ժամանակակից մի քանի սլաւ ազգութիւնների (սև լեռնցիք, սերբիացիք) և կովկասեան լեռնականների (չեչենների, լեզգիների, արխազների, օսերի և այլն) վրէժխնդրութիւնները—ամեն տեղ այդ վրէժը կանգուն է մնում և պահանջում ժողովրդի կրօնական աշխարհայեցողութեան շնորհիւ, որը սրբազործում է դարերով գոյութիւն ունեցող սօփորութիւնն և սերնդից սերունդ, ազգականից ազգական պարտաւորացնում է այդ կատարելու:

Դառնանք հայ սօփորութեան իրաւունքին: Եթէ նշկատի առնենք սերնդային սկզբունքները և դրան կցօրդ՝ մեռեալների պաշտամունքը, որոնք տիրապետում են հայ-

կական ընտանիքի կազմակերպութեան մէջ <sup>1)</sup>, կարելի էր à priori ենթադրել, որ հայերի մէջ էլ գոյութիւն էր ունենալու արեան վրէժի հիմնարկութիւն: Յիրաւի, ոչ թէ ենթադրելու՝ այլ և իրաւունք ունինք հաստատապէս յայտնելու, թէ հայ սովորութեան իրաւունքին ծանօթ է արեան վրէժը: Զնայած պատմական նիւթերի սղութեանը, չնայած ժամանակակից մեր ժողովրդագրական փաստերի ազդատութեանը՝ այնուամենայնիւ մեր ձեռքի տակ եղած թէ պատմական և թէ արդի տեղեկութիւնների հիման վրայ, կարելի է կըրակացնել արեան վրէժի գոյութեան հարցը գրականօրէն:

Տարաբազաբար մեր հայ պատմագիրներն իրենց երկերում ընաւ չեն տալիս ուղղակի տեղեկութիւններ, թէ արդեօք հին Հայաստանում գոյութիւն ունէր արեան վրէժը, երբև մի իրաւաբանական հիմնարկութիւն: Այլապէս չէր էլ կարելի սպասել մեր հին գրողներին: Մեր պատմագիրները բոլորը հոգևոր գասակարգից էին և սնուած, կրթուած ամբողջապէս քրիստոնէական վարդապետութեան գաղափարներով, ուստի իրենց երկերի վրայ էլ գրօջմեցին իրենց աշխարհայեացքի սպեցիֆիկ ոգին՝ անհամբերատար լինել դէպի ամէն ինչ, որ հեթանոսական էր: Արեան վրէժը, իբրև մի երևոյթ, որ միանգամայն հակառակ է քրիստոնէութեան հիմնական սկզբունքին՝ ներել ու սիրել ամենքին, նոյն իսկ թշնամուն՝ տեղ չէր գտնի նրանց գաղափարների մէջ: Միւս կողմից էլ արեան վրէժը, իբրև մի սովորութիւն, որ բացառապէս հեթանոսական գըրոջմ է կրում իւր վրայ, մի սովորութիւն, որ բոլորում է ժողովրդի հեթանոսական—կրօնական աշխարհայեացքից, անուշա հալածանքի պէտք էր ենթարկուէր հոգևորականութիւնից: Բայց և այնպէս՝ մեր պատմագրների երկերում այս ու այնտեղ սպրտում են փաստեր, որոնք միանգամայն ակամայ, գուցէ և անսպասելի յիշեալ պատմաբան-

<sup>1)</sup> Տես՝ Кавказский Вѣстникъ, 1902 г. № 1. Очерки по обычному семейному праву армянъ.

ներքի համար, մեզ կարող են մօտաւորապէս գաղափար տալ արեան վրէժի գոյութեան մասին: Այդ փաստերը մեզ կրժառայեն իբրև թանգազին հետքեր, որոնց վրայով հնարաւոր կրլինի դիմել մեր ընտրած նպատակակէտին՝ ապացուցանել վրէժխնդրութեան գոյութիւնն հայ սովորութեան իրաւունքի մէջ:

## II

Արայ Գեղեցիկի և Շամիրամի յարաբերութիւնների վիպասանական պատմութեան մէջ նկարագրոււմ է, թէ ինչպէս նինուէի այդ թագուհին ահաւ գողի մէջ է ընկնոււմ Արայի սպանման պատճառով. «իսկ 'ի գրգռել միւսանգամ դօրացն հայոց 'ի մարտ պատերազմի ընդ տիկնոջ Շամիրամայ՝ քինախնդիք լինել մահուանն Արայի, առէ. «հրամայեցի աստուածոց իմոց լիզել զվէրս և կենդանացիս» (Մովսէս Խորեն. գիրք Ա, Գլ. Ժէ.): Հայերի իրենց սիրեցեալ նահապետի համար վրիժառու լինելը գրգռել էր թագուհուն մի ելք գտնել և նա դիմել էր խաբեբայութեանը: Ինչպէս աւանդութիւնը պատմոււմ է, երբ Արայի յարութիւնը յարալէզների օգնութեամբ չէր իրականացել և երբ դիակը արդէն նետուել էր, Շամիրամը հրամայոււմ է հագցնել իւր մօտիկ մարդիկներից մէկին, որը շատ նմանութիւն ունէր Արային, վերջինից հանած շորերը և ապա ցոյց տալ նրան գրգռուած հայ ամբոխին: Այդ միջոցով միայն թագուհին կարողանոււմ է հանգստացնել վրիժառու կրքերը: Այստեղ, ինչպէս նկատոււմ ենք, վրիժառուն ոչ թէ մի անձն է, զորօրինակ որդին, եղբայրը կամ օւրիշ մօտիկ մի ազգական, այլ ամբողջ ազգը: Հին հայոց պատմական շրջանն, որին վերաբերոււմ է մեր Արայի վէպը, միանգամայն նահապետական կազմ էր ներկայացնոււմ: Ազգութիւնն այն մտքով, ինչպէս այսօր մենք ենք հասկանոււմ, այն ժամանակ գոյութիւն չունէր. դա բաղկացած էր որոշ ազգակցական խմբակցութիւններից, որոնք կազմոււմ էին մի մի սերունդ, սերուած

որևէ մի նահապետից, Իւրաքանչիւր սերնդի անգամը գիտակցում էր իւր արեւնակցական ազգակցութեան գաղափարը և սրբութեամբ պահպանում այն բոլոր պարտաւորութիւններն ու աւանդութիւնները, որոնք կցորդ էին սերնդական միութեանը: Արեան վրէժն էլ իբրև հնադարեան մի հիմնարկութիւն (ինստիտուտ), սրբագործուած սերնդական—ցեղական պաշտամունքներից, անշուշտ պարտադիր էր սերնդի, նոյն խնկ ցեղի բոլոր բազկացուցիչ տարրերի համար: Երբ նրա անդամներից մէկի համար վրէժ էր հարկաւոր առնել, 'ի հարկէ այդ պարտականութիւնը ամբողջապէս ծանրանում էր ամենամօտիկ ազգականի վրայ, սակայն և սերնդի իւրաքանչիւր անգամը սրբազան պարսօք էր համարում իւր գործակցութեամբ օժանդակել վրէժխընդիր սերնդակցին: Բայց երբ վրիժառութիւն էր պահանջում նահապետի կամ սերնդի որևէ մեծաւորի մահը, խօսք չկայ որ այս դէպքում վրէժ էին կանչում ոչ միայն մօտակայ ազգականները, այլ և սերնդի բոլոր անդամները, իբրև այդ նահապետի, մեծաւորի արեւակիցներ, իբրև այդ նահապետի նախահայրերից սերուածներ: Ահա այս տեսակ համայն—սերնդական վրէժ է ներկայացնում այն, ինչից որ վախենում էր Շամիրամը՝ հայերի կողմից չբինախնդիր լինել մահուանն Արայիչ:

Մի այլ տեղ նոյն Մովսէս Խորենացին մեզ աւանդում է, թէ ինչպէս հայոց Թագաւոր Խոսրովն և նոյն հետայն միաբանեալ զգօրս հայոց, անցանէ ընդ լեառնն մեծ, վրէժս պահանջելով մահուան հօրնս (Բ. գլ. Կէ.): Վրէժի ձայնն թելագրել է Խոսրովին պատերազմի գնալ խաղարների ու սարմատացիների դէմ, որոնք սպանել էին նրա հօրը: Խոսրովի այդ վրէժն աւելի անհատական գոյն է կրում. նա հանդէս է գալիս իբրև անձն, թէև նա այդ վրէժը կատար է ածում մի ամբողջ ժողովրդի դէմ և այն էլ իւր զօրքի օգնութեամբ:

Նմանօրինակ փաստ գտնում ենք Փաւստոս Բիւզանդի մօտ Մուշեղ սպարապետ Մամիկոնեանի վերաբերմամբ:

ւիակ Մուշեղ զօրավարն Հայաստանեայց շրջէր ընդ երկիրն և աւերէր զատրուշանս մազդեղանցն, իսկ զմազդեղունան որ մի անգամ 'ի բուռն անկան' զամենեսեան տայր հրաման սպարապետն Մուշեղ ունել և հրով խորովել և զբազում պատուաւոր տեարս, որ պատուականք էին առաջի թագաւորին պարսից՝ ունէր ձերբակալա, և տայր մորթել և ընուլ խոտով և կանգնել 'ի վերայ պարսպացն... ընդ բազում տեղիս զայս առնէր (Մուշեղ) 'ի վրէժս հօրն իւրոյ Վասակայս (գալ. է, գլ. Ա.)

Երբ սպանուածն որդիք շունի կամ դրանք անշափահաս են, այն ժամանակ վրէժխնդրութեան պարտքը դըրւում է նրա եղբայրների, կամ հօր կամ մի այլ կողմնակի ազգականի վրայ: Այսպիսի վրէժխնդրութեան օրինակ գտնոււմ ենք Սմբատ պատմագրի մօտ. ըի թուին Ոժի սպանաւ պարոն Ստեֆանէ եղբայր պարոն Թորոսի՝ նենգութեամբ անօրէն Տուկին Համուտին, որ ձայնեաց զնա սիրով, և բռնեցին և խաչեցին 'ի պղինձն: Եւ Տնաց Ստեֆանէի երկու տղայ Ռուբէն և Լևոն: Իսկ եղբայրն նորա պարոն Թորոս և պարոն Մլէհն զայրացեալ ընդ գործ նոցա առին վրէժ արեան նորան հազարապատիկ յաւելուածովս: <sup>1)</sup>

Սակայն վրէժխնդրութիւնն ազգակցութեան մի աստիճանով չի վերջանում: Նա անցնում է սերնդից սերունդ, հայրերից՝ որդիներին, թոռներին, ծօրներին և այլն: Մահմեդականների օրէնքներով վրէժխնդրութեան պարտաւորութիւնն անցնում էր ժառանգաբար մինչև որ ամբողջ սերնդից ոչ մի ներկայացուցիչ չէր մնում, որը իւր վերայ վերցնէր այդ պարտքը <sup>2)</sup>, նոյնն է ժամանակակից կովկասի լեռնականների՝ օսերի մէջ <sup>3)</sup>: Նմանօրինակ սովորութիւն գոյութիւն էր ունեցել նաև հայերի մէջ, գտնէ

<sup>1)</sup> Սմբատ Սպարապետի պատմութիւն 'ի Մոսկուա 1856 թ. էր. 86.

<sup>2)</sup> Tobin—Die Blutrache 1840.

<sup>3)</sup> М. Ковалевскій—Современный обычай и древний законъ. II томъ

այդպէս կարելի է եզրակացնել Սմբատ պատմագրի յիշած մի փաստից: «Յայնժամ բարկացաւ պարոն Թորոս, և ասէ. «և դուք որ գայր հզօր և զօծեալ թագաւոր սպանիք, ինչ պացխուն տայք հայոց ազգիս»: Էառ կոան մի 'ի ձեռն, գնաց 'ի վերայ լալխառըն, եզարկ զնա 'ի գլուխն և սատակեաց: Յայնժամ գոհացաւ պարոն Թորոս զԱստուծոյ, որ արժանի արար զինքն առնուլ 'ի նոցանէ զվրէժ արեանն Գազկայ. քանզի մեծ հայրն նորա Ռուբէն յիշխանացն Գազկայ էր»: (Երես 77) Խօսք չկայ, որ այդպիսի վրիժառութեան գործողութիւնները, որոնք անցնում էին ժառանգաբար, առաջ էին բերում ստէպ հակառակ կողմից կրկին նոր վրէժխնդրութեան պատճառներ: Եւ ահա ծագում են մի շարք վրէժխնդրութիւնների պարտականութիւններ, որոնք ազգակից երկու որոշ խմբերին հանապաղ լարում էին միմեանց դէմ, թշնամութեամբ բորբոքում, որ պատրաստ լինեն ամեն մի վայրկեան իրենց հակառակորդներին շարիք հասցնել,—մի կերպ վրէժի ծարաւը յազեցնել: Հռոմէական պատմագիր Տակիտոսը իւր Germania պատմութեան մէջ տեղեկութիւններ է տալիս հին գերմանացիների մասին և 'ի միջի այլոց աւանդում: Թէ ինչպէս վրէժխնդրութիւնն նոցա մէջ անսահման է և անցնում է սերունդից սերունդ. inimicitias seu patris, seu propinquus suscipere necesse est (գլ. 21): Այդ տեսակ վրէժխնդրութիւնն պահպանուել էր նաև միջնադարեան գերմանացիների մէջ fehde անունով <sup>1)</sup>: Անցնելով հին հայկական սովորութեան իրաւունքին, մենք այստեղ էլ պատահում ենք փոխադարձ վրիժառութեան գէպքերի: Դրան փառաւոր ապացոյց գտնում ենք մեր պատմութեան մէջ նախարարական ու իշխանական աների յարաբերութիւններում: Ինչո՞վ պէտք է բացատրել այն արինահանդ ընդհարումները նախարարների մէջ, եթէ ոչ վրիժառութեան անսահման ծաւալով: Այդ վրիժառութիւնը փոխարկ-

<sup>1)</sup> Frauenstädt—Die Blutrache und Fehderecht. նաև Wilda Das Strafrecht der Germanen.

ուսում էր անվերջ թշնամական կրքերի, անվերջ գժտութիւնների, որոնք դարերով պահպանուում էին որոշ տոհմերի փոխադարձ յարաբերութիւնների մէջ: Մեր ամբողջ պատմութիւնն՝ այդ նախարարական ցեղերի իրար դէմ լարած կռիւների ու միմեանց բնաջինջ անելու ձգտումների նկարագրութիւնն է: Մրցութեան, գերիշխանութեան և այլ անձնական կրքերն էին, որ շատ անգամ նախարարական տներին մոռացնել էին տալիս հասարակական շահերն և քինախնդիր նետում անվերջ թշնամական պայքարների ու ինտրիգների մէջ, որ նոքա դարերով լարում էին հակառակորդ տոհմերի դէմ:

### III

Միանգամայն հասկանալի է, որ ժողովրդի մէջ, որտեղ սերնդական սկզբունքները խորն էին արմատացած և որտեղ իրաւաբանական հասկացողութիւնները դեռ ևս կանգնած էին իրենց դարգացման ստորին աստիճաններում, վրիժառութիւնը միակ միջոցն էր, որով իւրաքանչիւր անհատ կարող էր իւր անձնական ապահովութիւնը պաշտպանել թէ ներկայում և թէ ապագայում: Տակաւին այն ժամանակները, երբ հայկական կեանքում դտնում ենք հասարակական—վարչական որոշ կազմակերպութիւն, ինչպէս օրինակ գաւառաւորներ, իշխաններ և այլն, այնու ամենայնիւ վրէժխնդրութեան սկզբունքը կանգուն է մնում. նոյն իսկ այդ սկզբունքով են զեկազարւում վարչական մարմինները և ուրեմն այդ վրէժը օրինական է համարւում վերջինների կողմից: Մեր ձեռքն է հասել մի թանգագիրն վկայութիւն, որը միանգամայն պարզ հաստատում է, թէ հին հայերի մէջ գոյութիւն է ունեցել վրէժխնդրութիւն և այդ վրէժխնդրութեան սկզբունքն երբեմն իսկ գաւառաւորներից էր առաջ գալիս: Դա Եւսեբիոսն է, որ իւր Praeparation Evangelica (VI. 10, § 2) ասորի Ռարգեղանէսի խօսքերի վրայ հիմնուելով ասում է, թէ հայե-

րի և պարթեկացիների մէջ մարդասպանները պատժուած էին մահուամբ թէ դատաւորների և թէ սպանուածի ազգականների ձեռքով. եթէ վերջիներն անհատական վրիժառու թիւնից գրգուած սպանուած էին մարդասպանի ազգականներից մէկին, այն ժամանակ նարա ըստ տեղական օրէնքների պատասխանատու չէին դատաւորների առաջ. «Παρά Πάροδοις καὶ Ἀρμενίοις οἱ φονεῖς ἀναιροῦνται, ποτὲ μὲν ἐπὶ τῶν δικαστῶν, ποτὲ δὲ ἐπὶ θυγγενῶν τῶν φονευομένων. Καὶ ἐάν τις φονεῖσθαι γυναικα αὐτοῦ ἢ ἀδελφὸν ἄτεκνον ἢ ἀδελφὴν ἄγαμον ἢ υἱὸν ἢ θυγατέρα, οὐκ ἐγκαλεῖται ἐπὶ τινος νόμου τοιοῦτου ἐπάρχοντος ἐν ταῖς χώραις ἐκείναις.» Սակայն միայն այդ օտարազգի պատմագրի խօսքերը չեն, որ հաստատուած են վրէժխնդրութեան գոյութիւնն հայերի մէջ. այլ և մեր Եզնիկ Կողբացի տալիս է այդ հարցի վերաբերմամբ հետաքրքրական տեղեկութիւններ. «Տեսանեմք թէ թագաւորն զիւրոց օրինաց վրէժս պահանջէ, և պահանջմամբ վրիժուցն զֆնասն կարծէ. և դատաւորն զգողն և զաւազակն պրկէ և քրէ վասն զֆնասակարութիւնն ՚ի միջոյ բառնալոյ. և հայր զորդի դժնեայ մահապարտեալ՝ դատաւորաց մասնէ, և այլքն ասննեքեան զիւրաքանչիւր զանձն իւր զանարգանաց վրէժս պահանջեն կամ անձամբ կամ իշխանօք» (գլ. Ա. ԺԵ). Եւս առաւել թանգագին է մեր հայ մատենագրի վերջին խօսքերը, որոնք միանգամայն լուսարանուած են այն, ինչ որ Եւսեբիոսը աւելի հին ժամանակների համար է վկայուած Իրաւունք, դատաստան այն մտքով, ինչպէս մենք ենք ներկայումս ըմբռնուած, բոլորովին խորթ էր հին հայոց այլաբնականացքին Իրաւունքի, դատաստանի իրականացումն կատարուած էր բացառապէս անհատի ինքնօգնութիւնից, սեփական ձեռնարկութիւնից: Այդ է պատճառը, որ Եզնիկը շեշտուած է, թէ անարգանաց վրէժս պահանջեն կամ անձամբ, այսինքն ինքը ֆնասուողը պէտք էր սեփական ոյժով, իւր օգնութեամբ, միջոցներ ձեռք առնէր որպէսզի կրած ֆնասն, լինի դա ընչքի, թէ մարմնի՝ ցրացնի և ա-

պա պատժի ենթարկի մեղաւորին. և շնորհ իշխանօքս, այսինքն կամ դիմէ դատաւորներին, որպիսի պարտաւորութիւն կատարում էին իշխանները: Այդ իշխանները 'ի հարկէ յարմարելով ժողովրդական սովորութիւններին ու աշխարհայեացքին, միայն կատարելու և հաստատելու էին այն, ինչ որ անելու էր հակառակ դէպքում և ինքն զնասուողը՝ վրէժխնդրութեան սկզբունքին հաւատարիմ մնալ: Թէ որքան հաւատարիմ էին մնում այդ սկզբունքին և թէ որ աստիճանի էր տարածուած վրէժխնդրութեան ու գին հոյ իշխանաւորների մէջ, դա երևում է Ներսէս Շնորհալու Ընդհանրականից: Այդ խօսքերը Ներսէս Շնորհալին արտասանում է XII դարում, երբ քրիստոնէութեան շնորհիւ, բարքերը հայերի մէջ համեմատաբար ազնուացել ու մեղմացել էին: Ինչ որ V դարում Եղիշիկի համար ընական ու շիտակ էր համարում, XII դարում արդէն ազօրինի է թւում հայկական վարչական ներկայացուցիչներին: Մի առ բարկութիւն շարժելով և ոչ ուղղադատ իրաւամբք, կամ խրատ ինչ առնէք մարդոյ կամ մահու վճիռ տայցէք. քանզի նոր օրէնք ոչ հրամայեն զայստսիկ, և հին օրէնքն թէպէտ և հրամայեն, բայց ոչ վայրագար, այլ ըստ յանցանացն արժանաւորութեան զիրաքանչիւրսն դատել 'ի խրատ և 'ի մահ... Իսկ եթէ առանց օրինաց դատիք զմարդիկ անիրաւաբար 'ի սպանումն և 'ի խրատ, դիտասջիք հաստատուն, զի խնդրելոց է 'ի ձենջ Աստուած յաւուրն դատաստանի զարիւն սպանելոցն և զհատեալ անդամս խրատելոցն... Նաև զմյս և պատուիրան աւանդեմք ձեզ, մի լինիք վրիժաուօք և քինախընդիրք... (Ներս. Շնորհ. էջմիածին, 1866. եր. 103).

Համեմատական իրաւագիտութիւնից յայտնի է, որ պետական սկզբունքով կազմակերպուած հասարակութիւնները որոշ հիմնարկութիւններ են հաստատում վրէժխնդրութեան անսանձ ծաւալն ու զարգացումն եթէ ոչ խափանելու, գոնէ առժամանակ դադար տալու: Այդ նպատակով գոյութիւն ունէին հսուց ի վեր և նշանակուած

էին պետութիւնից որոշ տեղեր՝ օրինակ քաղաքներ, տաճարներ և այլն, որոշ օրեր՝ մի քանի ամիսներ կամ շաբաթուայ մէջ մի յայտնի օր, կամ որոշ անձնաւորութիւններ՝ որեւէ կալուածատէր իշխան, կամ թագաւոր և կամ որեւէ հոգևոր պետ: Այդ բոլորը մի միջոց էր, որ առիթ էր տալիս վրիժառու ախոյեաններէ ծարաւը որոշ ժամանակամիջոցով հանդատացնել. դա այդպէս անուանուած ապաստանի իրաւունքն էր՝ asylrecht, որ սրբութեամբ էր պահուած եթէ վրէժխնդրութիւնից հալածուողը փախչում էր և ապաստանում այդպիսի մի տեղ կամ այդպիսի մի անձնաւորութեան մօտ, վրիժառուն իրաւունք չունէր ձեռք տալ իւր թշնամուն, քանի որ վերջինս վայելում էր յիշեալ ապաստանի իրաւունքը: Նմանապէս, եթէ պետութիւնից նշանակուած ու վրէժ արգելած օրերը վրիժառու անձինք միմեանց հանդիպէին, իրաւունք չունէին իրար վրայ ձեռք բարձրացնել: Ապաստանի իրաւունքը շատ զարգացած էր իսրայելացիներէ, նաև հին և միջնադարեան գերմանացիներէ մէջ. էլ չենք խօսում հին յոյներէ, հռոմէացիներէ մասին: Ահա այդպիսի մի հիմնարկութեան հետքերի հետ ծանօթանում ենք և մեր հայոց պատմութիւնից: Չայնու ժամանակաւ շինեաց իւր արքայն (Արշակ) դաստակերտ մի 'ի Կոզ գաւառի: Եւ ետ հրաման ընդ ամենայն գաւառս իշխանութեան իւրոյ, և հրամայեաց կարգալ քարոզ ընդ ամենայն տեղիս աշխարհացն, և զամենայն կողմանս գաւառաց իւրոց լի առնէր հրամանաւ արքանի, զի եթէ որ ումեք ինչ պարտեցի, եթէ որ ումեք ուտեք ինչ փութեալ իցէ՝ ամենեքեան եկեսցեն 'ի դաստակերտն զոր շինեաց, եթէ արիւնական որ իցէ, կամ փրսս ումեք արարեալ իցէ, կամ զկին ուրուք տարեալ իցէ, կամ որ զուրուք կարասի ունեցի, և կամ որ յումեքէ երկիւղած ինչ իցէ և եկեսցէ յայն տեղի՝ դատ եւ իրաւանք մի լիցին: Իսկ եթէ որ ումեք ինչ պարտեցի, և որում պարտեցին գայցէ յայն տեղին՝ առանց դատի և իրաւանց կայցին զնա և 'ի դուրս տարցին: (Փաւստոս Բիւզ. Գ. ԺԲ):

Նոյն այս փաստի մասին վկայում է նաև Մովսէս Խորենացին (գլ. Գ. Իէ)։ Բայց բանն այն է, որ յիշեալ երկու պատմագիրները այլ գոյներով են ներկայացնում Արշակ թագաւորի այդ հիմնարկութիւնն, աշխատելով ստորացնել, և մեզ հասկանալի պատճառներով անուանարկել այդ՝ իբրև մի շփոթով մարդկան մեղաւորաց (Մովսէս Խոր.) կամ ւժամն այսորիկ զամենայն մարդ հառաչելով վայէին թէ իբաւունք մեռան (Փաւստ. Բիւզ.)։ Նկատի առնելով մեր հոգեւորականութեան ու աշխարհական ներկայացուցիչների դարևոր մրցումն, որ իւր գաղաթնակէտին էր հասել այնպիսի մեծ և ընդունակ անձնաւորութիւնների միջև, որպիսիք էին Ներսէս Մեծն ու Արշակ II-ը, մեզ պարզ է, որ պատմագիրները միանգամայն ուրիշ մտքով էին ըմբռնել կամ ընաւ չէին հասկացել Արշակաւանի հիմնարկութեան գաղափարը։ Այդտեղ նոքա միայն տեսնում էին, թէ ինչպէս աշխարհական պետութեան ներկայացուցիչն ուղում է զրկել կամ խլել հոգեւորականութեան ձեռքից դատի ու դատաստանի իբաւունքը։ Մինչդեռ Արշակաւանի հիմնարկումն, չնայած մեր ձեռքն հասած սուղ տեղեկութիւններին, հենց իւր այն նպատակով ու թագաւորի այն կոչով, որը նսեմացնելու գիտաւորութեամբ առաջ են բերում երկու պատմագիրները, մեզ իբաւունք է տալիս ենթադրելու, որ դա ուրիշ ոչինչ է, եթէ ոչ ապաստանի իբաւունքի մի մարմնացումն։ Արշակաւանն մի տեղ էր լինելու, ուր թագաւորի երկրի զանազան ծայրերից զանազան անձինք կարող էին ապաստան գտնել իրենց հալածողներից, վրիժառուներից, լինէին այդ վրիժառուները՝ թէ մարմնական և թէ ընչական փրատների համար։

## IV

Մինչև այստեղ աշխատեցինք տեսութեան առնել այն փաստերը, որոնք յայտնի են պատմութիւնից։ Այդ փաս-

տերը վկայում են վրէժխնդրութեան գոյութիւնն Հին Հայոց մէջ և նոյն իսկ, թէև թոյլ կերպով, ներկայացնում են մեզ այդ վրէժխնդրութեան էվոլյուցիոնի զանազան աստիճանները:

Անցել են դարեր և ժամանակի պատմական հոսանքի հետ փոխուել է նաև մեր ժողովրդի կուլտուր-սոցեալական դրութիւնը: Բայց հասարակական կեանքի զարգացման մէջ հանապազ թագնուած են տարրեր, որոնք շատ դանդաղ, շատ պահպանողական քայլերով են առաջընթանում, տակաւին գտնելով պայմաններ, որտեղ ժողովրդի մտաւոր-բարոյական աշխարհայեացքը ճգնում է իւր հնագարեան գոյութեան բեկորները պահպանել: Դա՛ ժողովրդի սովորութիւններն ու բարքերն են, որոնք ժամանակի ու իրերի զարգացման ամենակատաղի թշնամիներն են: Ահա այսօր էլ մեր ժողովրդի սովորութիւնների մէջ պահպանուել են կամ աստիճանաբար չքանալու վրայ են այն մնացորդները, որոնք կրկին վկայում են վրէժխնդրութեան գաղափարի ծաղկումն: Մեր հայ ազգագրութիւնը տակաւին նոր է սկսուել, ուստի նիւթերի կողմից աղքատ է, բայց և այնպէս՝ եղածներն էլ բաւական են հաստատելու մեր այս տեսութեան մէջ արժարժուած հարցը: Այստեղ էլ նոյնն ենք տեսնում, ինչ որ պատմութիւնն է մեզ հաղորդել. վրէժխնդրութեան ներկայութիւնը մինչև մեր օրերը:

Վրէժխնդրութիւնը բաւականին անարատ պահպանուել է Զէյթունի հայերի մէջ, որտեղ վրէժառութիւնն ընդհանրապէս սերնդական հանգամանք մ՛ ունիւ (Ալահ-վերդեան՝ Ուլիա կամ Զէյթուն՝ Կ. Պոլիս): Սպանութեան դէպքերում սպանուածի ազգականները Զէյթունում պատրաստ են միշտ պատասխանել նոյնպէս սպանութեամբ և այդպիսով յագեցնել սերնդական վրէժխնդրութեան պարտաւորութիւնը: Ոչ միայն սպանութեան դէպքերում, այլ և ամեն մի անձնական և ընտանեկան ընդհարումների ժամանակ, երբ հակառակող կողմերի կրքերը հասնում են

թշնամականի, առաջ է գալիս վրէժխնդրութեան հարցը Այստեղ վրէժխնդրութիւնը կարող է արտայայտուիլ ոչ միայն սպանութեամբ, այլ և մի շարք միջոցներով, որոնցով հակառակորդները ձգտում են միմեանց նիւթական մնասներ հասցնել, անձնական պատիւը վիրաւորել և այլն: Այսպիսի վրէժառութեան եղանակների մի շարք առաջ է բերում Ալլահօվէրդեանը Զէյթունցիների վերաբերմամբ:

1. Որև է վէճի առթիւ՝ հակառակորդաց մին 'ի գիշերայն գաղտնագողի միւսոյն տունն կըմտնայ և նորա ննջած ատեն գոյգ մը գնդակով հրացան մ' արձակելու շափ վառօդ բարձին քով կըդնէ 'ի տես և ընդ փոյթ կը հեռանայ, սա առաւօտուն արթնանալով կըտեսնէ ու կը երկնչի. նշանակութիւն սորա է. ահա եկայ քովդ և ունէի ամեն միջոց զքեզ սպանելու, բայց չըրի, դադրէ ուրեմն և դու այլևս ինձ հակառակելէ: Եւ եթէ հակառակորդն քան զառաջինն զօրաւորագոյն լինի, իրարու հանդիպած ատեն զինուք կըկուտին:

2. Նոյնպէս հակառակորդաց մին 'ի գիշերայն եկեղեցւոյ բակէն դադարն կըգողանայ ու կըտանի թշնամւոյն դուռն ի վեր կըկանգնեցնէ. այս սպառնալիք մ'է, որ կը նշանակէ զքեզ շէշփետին վերան կու հանիմ: զքեզ դադարի վրայ կըհանեմ; (կըսպանեմ):

3. Երեկոյէն սկսեալ ցկէս գիշեր իրարու տուն կը քարկոծեն:

4. Տանեաց վրայ գտնուած լող քարերն բարձր տան մը վրայէն թշնամւոյն տանեաց վերայ կընետեն, որ առաստաղի ձողերն կը կտարէ:

5. Մխնելոյզքն, որք հողէ կամ փայտէ շինուած են՝ կըփուլցնեն:

6. Ժամը 12-ին կամ անկէ վերջը եթէ իրարու կնոջ հանդիպին՝ գլխոյն և երեսին ծածկոցն կամ ճակատէն ոսկին կը յափշտակեն:

7. Իրարու այգի մտնելով որթերն կըկտորեն յարմատոյ:

8. Այգիոց մէջ դանուած տուներն կ'այրեն:

9. Եզին, ձիին, ջորիին և իշուն ադին կամ ականջն կըկտրեն:

10. Այգեաց մէջ փռուած չամիչն եթէ թարմ է կը կոխտան, իսկ եթէ չոր է, կըզողանան:

11. Եթէ հակառակորդաց մին ջաղացք ունի, ջրի ընթացքն կը խափանեն խողովակի մէջ քար ձգելով:

Այս վերջին տեսակի վրիժառութիւնը, որ արտայայտուած է հակառակորդին նիւթապէս փնտսելու գաղափարով, շատ տարածուած է և մեր կովկասաբնակ հայ գիւղացիների մէջ: Այստեղ աւելորդ է մի առ մի յիշատակել այդպիսի դէպքեր, որոնք այնքան սովորական երևոյթ են դարձել մեզանում և որոնց մասին միշտ արձանագրուած է եղել մեր օրաթերթերի մէջ: Բայց և այնպէս՝ առաջ բերենք մի բնորոշ սովորութիւն, որի մասին տեղեկութիւն է տալիս մի թղթակից (Մշակ № 141, 1902 թ.):

Յիշեալ թղթակիցը սխալ է լուսաբանում իւր տուած տեղեկութիւնը, կարծելով որ այն վրէժխնդրութեան դէպքերը լոկ քիւրդական և այլ վայրենի ցեղերին յատուկ սովորութիւններ են, որոնք իբր թէ անցել են հայերին: Ընդհակառակն, վրէժխնդրութիւնը նոյնքան բնական-ինքնաբոյս է հայերի՝ որքան և քիւրդերի կամ այլ կիսավայրենի ցեղերի համար, որոնց վրէժխնդրութիւնը արտայայտուած է գուցէ աւելի խիստ ու բիրթ, քան թէ հայերինը, քանի որ վերջիններս կուշտուրապէս աւելի բարձր են յիշեալ հարևաններից: Ուստի ուշադրութեան շառնելով այդ թղթակցի անձնական կարծիքները, միմիայն բաւականանանք նրա յիշած փաստային կողմով: Ընչպէս քիւրդերի, պարսիկների և այլ կիսավայրենի ցեղերի մէջ յաճախ աղջիկ ուղելու դէպքում, տեղի են ունենում զանազան արիւնահեղ դէպքեր, միևնոյն բանը և յաճախ տեղի է ունենում հայերիս մէջ էլ: Հայ գաւառներում, գիւղերում գրեթէ սովորական են միշտ այդպիսի դէպքերը: Արարատեան նահանգում, աւելի շատ Ապարանում, ուր ժողովորդը

համեմատաբար աւելի տգէտ է, քան միւս կողմերում, միշտ անպակաս են արիւնահեղ գէպքերը այդ կողմից, նաև անգամ ամբողջ մի գիւղի բնակիչներ, երկու կողմի բաժանուած, մի աղջկայ համար միմեանց միս են կրծում. մէկը միւսի տաւարը թալանում, մարագը, գէղը, քուլաղը կրակում, ծառերը կտաօրում և այլն: Կոպիտ գիւղացու համար դա ինքնասիրութեան խնդիր է, իսկ երբ մէջ տեղ է գալիս վայրենի կիրքը, այդ գէպքում նա դառնում է անողջայ գաղան: Բայց աւելի դատապարտելի է, որ այդ քրդական (!) գէպքերը տեղի են ունենում և քաղաքներում: ուր ժողովուրդը գոնէ փոքր 'ի շատէ զարգացած է, կրթուած...

Վրիժառուութեան սովորութիւնը գոյութիւն ունի նմանազէս Բուլանըխի մէջ առեւանգութեան գէպքերում: Յիժէ ժամանակին կիմացուի, աղջկայ ծնողները, ազգականները, մերձաւորները վրէժխնդիր հոգով կը հետապնդեն և շատ անգամ կամ աղջիկը կը վերադարձնեն կամ սպանութիւն և արիւնհեղուցութիւն տեղի կ'ունենայ, իսկ երբ չ'յաջողուի, վրէժ լուծելը կրթողներն ապագային նման առեւանգութեամբ տոհմային վրէժխնդրութեան յագուրդը գահացնելու<sup>1)</sup>: նմանօրինակ վրէժխնդրութիւն, որ հետեւում է առեւանգմանը, պատահում ենք Ախալքալաքի և այլ հայաբնակ դաւառներում:

Ժողովրդի աշխարհայեացքի, նրա մտաւոր-բարոյական հասկացողութիւնների հետ ծանօթանալու ամենաանհրաժեշտ միջոցը՝ նրա բանահիւսութեան ուսումնասիրութիւնն է: Այդ բանահիւսութեան մէջ է արտացոլում ժամանակակից բարքն ու վարքը, ժողովրդի մտածողութեան ձևերը, նրա հոգևոր զարգացման ամբողջ միջնորդը: Ահա և վրէժխնդրութիւնն իբրև մի սովորութիւն, որ բղխում է ժողովրդի մտաւոր-բարոյական աշխարհայեացքից, շատ անգամ յիշատակում է ռամկական բանահիւսութեան մէջ: Ինչպէս որ պատմական վիպասանութիւնից Մովսէս Խորե-

<sup>1)</sup> Ազգագրական Հանդէս. Ե. գիրք, 1899 Բուլանըխ.

նացին մեզ աւանդում է իբրև պատմական փաստ Շամիրամի վախը հայերի վրէժխնդրութիւնից, նոյնպէս էլ մեր ժամանակակից անարուեստ գրականութեան մէջ տեսնում ենք, թէ ինչպէս ժողովուրդը տակաւին չի փոխել իւր հայեացքը սերնդական վրիժառութեան վերաբերմամբ: Մեր աամկական բանահիւսութեան մէջ նշանաւոր տեղ է բռնում Վրաւիթ և Մհերի գիւցազներգութիւնը, որտեղ պարզ ցոյց է տրւում, թէ սպանուածի որդին պարտաւոր է վրէժ առնել իւր հօր սպանողից.

Զիւց վէ էկաւ, Դաւիթ Մհեր մտան գիւլաշ.

Մտան գիւլաշ, Մհեր Դաւիթին տվից գետին.

Դանակ խանից, որ զԴաւիթ զինէր,

Դաւիթն էսաց. «Ա՛յ տղայ,

Տիւ ընձի կ'սպանին.

Ախր ընձի տղայ ոմիմ,

Իմ տղէն կըզայ քեզ կը մորթիս <sup>1)</sup>».

Մի այլ տեղ Մհերը խկապէս վրէժ է առնում իւր հօր, Դաւիթի սպանութեան համար: Երբ Դաւիթը, Սըլլթան Չմուշկի հետ կառի բռնուելով, սպանւում է մի պառաւի ձեռքից, Մհերը լսում է իւր հօր ձայնը. նա գիմում է քեռի Թորոսին՝

«Էլենք էրթանք, իմ խէր կնացիր է

«Սըլլթան Չմուշկի կռիւ.

«Իմ խէր սպանին»:

Այնուհետև Մհերը.

«Խինդ քեռիք իրու խեա առեց

«Էկան կնացին Սըլլթան Չմուշկի կռիւ,

«Մտան Սըլլթան Չմուշկի քաղաք.

• • • • •

«Ինչ կայ չկայ՝ բիրադը սպանին»

«Սըլլթան Չըմուշկ զինքն էրաւ մէ կատու.

«Ինաց մների կլէօխ, նստաւ էնտեղը,

«Մհեր տեսաւ • • • • •

<sup>1)</sup> Ազգագրական Հանդէս՝ VII և VIII գիրք. 1901 թ. Կր. 107.

«Մհեր նետ-աղեղ եղարկ,  
 «Սըլթան Չմուշկ սպանեց,  
 «Էլաւ իրա խօր ջամգակ իբարձ,  
 «Տարաւ Սասուն,  
 «Ժամսով պատարագով վըրցուց<sup>1)</sup>»:

## V

Իրաւաբանական սովորութիւններէց մէկն էլ սերտ յարակցութիւն ունի արեան վրէժի գաղափարի հետ, գա այսպէս անուանած՝ եղբայրակցութիւնն է, սլաւոնական՝ побратимство-ն, յունական՝ Ἀδελφοποιութ, գերմանական՝ die verbrüderung կամ Blutfrüderschaft, որպիսի երևոյթ տեղի ունի գրեթէ բոլոր երկրներում և բաւականին ընդհանրական բնաստութիւն է կրում: Եղբայրակցութեան ներկայութիւնը ժողովրդական սովորութիւնների մէջ համեմատական իրաւագիտութիւնը համարում է մի փաստ, որով ապացուցանել կարելի է, թէ այդ ժողովրդի բարքերի մէջ գոյութիւն ունի կամ երբեկիցէ գոյութիւն է ունեցել արեան վրէժխնդրութեան սովորութիւնը: Եղբայրակցութիւնը պարփակում է իւր մէջ հետեւեալ գաղափարը: Երկու, միանգամայն օտար անձինք որոշ ծէսեր կատարելով, դառնում են ընդմիջտ ազգական: Այդ ծէսերի մէջ ամենաբնորոշը կայանում է նրանում, որ փոխադարձաբար խմում են արիւն և փոխանակում զէնքերով: Նոքա այդ բողեից կապում են անխղելի ազգակցական կապերով, իբրև եղբայրներ, որոնք պարտաւոր են իրար պաշտպանութեան գալ փորձանքների ժամանակ, օգնութեան հասնել չբաւարութեան մէջ և մանաւանդ սրբութեամբ պահպանել արեան վրէժի օգին: Մի կողմը թողած միւս ժողովուրդները, եղբայրակցութեան գաղափարը բաւական անարատութեամբ պահպանուել է ամենահին ժամանակներից ի վեր մինչև այսօր սլաւ ազգութիւնների մէջ (Սև

<sup>1)</sup> Ազգագրական Հանդէս՝ VII և VIII գիրք 1901.

լեռնցիք, Սերբիացիք, Բուլղարներ և այլն)։ Նոյն այդ հիմնարկութիւնը պատմական ժամանակներից անցել է մինչև այսօր հայերի մէջ։ Ամբողջ Առաջաւոր Ասիայում, որի մի մասն էր կազմում և Հայաստանը, եղբայրակցութեան գաղափարը, ինչպէս կարելի է եղբակացնել պատմական տեղեկութիւններից, մեծ ծաւալով տարածուած էր ընդի ժողովուրդների մէջ։ Հին հռովմէական իրաւունքին և Corpus iuris civilis-ին խորթ էին այդ սովորութեան իրաւարանական նշանակութիւնները։ Յետագայում, երբ Փոքր Ասիայում սկսուեց հռովմէական տիրապետութիւնը, և հռովմէական օրէնքների կիրառութիւնը, բնականաբար հռովմէական օրէնագրութիւնը պէտք էր հաշուի առնէր տեղական ժողովուրդների սովորութեան իրաւունքը, որի դէմ նա երբեմն նոյն իսկ կախ էր մղում։ Այդ տեղական սովորութեան իրաւունքին էր պատկանում և եղբայրակցութիւնը։ Աւստի հռովմէական իրաւունքն այսպէս թէ այնպէս ձգտում էր որոշ շահով հաշտուել այդ սովորութեան հետ, մասամբ ընդունել այդ իւր օրէնքների հովանաւորութեան տակ և իրաւարանական զօրութիւն տալ։

Դիտելով արհմոտ՝ հռովմէական կայսրը՝ իւր հրովարտականներից մէկում՝ «c. 7 de Heredit. instit.» յայտնում է իւր կաւթը, թէ եղբայրակցութիւնն այն ժամանակ միայն իրաւարանական զօրութիւն կարող է ունենալ, երբ դա իւրաքանչիւր առանձին գէպքում առաջ է դալիս կայսեր անձնական հրամանից։ Ասորա-հռովմէական դատաստանագիրքը (մտաւորապէս 5-դ դարու), որ այնպէս տարածուած էր ասիական դատարանական հիմնարկութիւններում, նմանապէս ուշադրութեան է տալի եղբայրակցութեան սովորութիւնը։ Յիշեալ դատաստանագրքի միմիայն արարական (§ 127) և հայկական (§ 126) վարիանտներումն է մի մի յօդուած նուիրած այդ հարցին։ Հայկականը՝ ձՆՁ յօդուածը կայանում է. «Եթէ կամի ոք գրել թուղթ եղբայրութեան ընկերոյն առ ՚ի լինել նոցա միաբան և զոր ինչ ունին և զոր ինչ լինիցի հաւասար իշխեն

և ժառանգեն, փակէ աւրէնքս զայս և իբրև դանհաստատ խափանէ. քանզի կանայք նոցա և որդիք ոչ կարին լինել միարան <sup>1)</sup>»

Թէև հռովմէական իրաւունքը, ինչպէս նկատեցինք, այդպէս խորթ էր վերաբերում դէպի եղբայրակցութեան գաղափարը, այնուամենայնիւ ժամանակների ընթացքում ստիպուած էր հաշտուելու ժողովրդի մէջ խորն արմատացած այդ սովորութեան հետ։ Եւ ահա Ռիզանդական իրաւունքը, որը հռովմէականի ժառանգն է, վերջնականապէս ընդունում է այդ գաղափարն իւր codex-ի մէջ և պետական օրէնքի զօրութիւն տալիս, ենթարկելով նրան եկեղեցական իրաւասութեան կանոններին։ Եղբայրակցութիւնը կատարում էր արդէն եկեղեցական օրհնութեամբ, վերջինս համարում էր եղբայրակիցներին հոգեւոր ազգականներ և արգելում նոցա մէջ ամուսնութեան կապեր <sup>2)</sup>։ Եթէ նկատի առնենք այն մեծ ազդեցութիւնը, որ ունեցել է բիզանդական քաղաքակրթութիւնը մեր հին քաղաքացիական կեանքի, նամանաւանդ մեր հոգևոր-եկեղեցական օրէնագրութեան վրայ, այն ժամանակ ինքնըստինքեան պարզ կը լինի, թէ ինչ բնասրութիւն էր կրելու յետագայում եղբայրակցութեան գաղափարը մեր հայկական կեանքում։ Մինչդեռ ժողովրդի աշխարհայեացքով եղբայրակցութիւնը բղտում էր բեաւնիւթական պայմաններից, որոնց մէջ առաջնակարգ տեղ է բռնում արեան վրէժի գաղափարը, վարչական-պետական ներկայացուցիչների աչքում՝ դա հոգևոր-բարոյական պարտաւորութիւնների շարքն է դասուում։

Վերև բերած բոլոր պատմական տեղեկութիւնները բաւական լոյս են սփռում այն ենթագրութեան վրայ, որ Հին-Հայաստանում, իբրև Առաջաւոր Ասիայի մի մա-

<sup>1)</sup> Surisch-römisches Reschtsbuch. Bruns und Sachou. Berlin. երես .133.

<sup>2)</sup> Zachariae-Deschichte d. griechisch-römischen Rechts. երես 97.

սուս, գոյութիւն ունէր ժողովրդի մէջ եղբայրակցութեան սովորութիւնը: Բայց այդ ենթադրութիւնը կը մնար լոկ ենթադրութիւն, եթէ մեր առաջ չը լինէին նոր փաստեր, որոնք ակներև ցոյց են տալիս, որ նոյն իսկ մինչև վերջերս, ներկայ հայ ժողովրդի մէջ պահպանուել է եղբայրակցութեան սովորութիւնը: Մի կողմը թողած այն փաստերը, որոնք նկարագրական ձևով առաջ են բերուած մի քանի հայ գիտասանների երկերում (բաւական է յիշել Պերճ Պաօշեանի՝ Սօս և Վարդիթերը, Կառուածադիկը), յիշատակենք այստեղ եղբայրակցութեան ընտրոշ նկարագրութիւնը, որ անուս է պ. Զէլինսկին, Զանգեզուրի հայերի վերաբերմամբ: Եղբայրակցութիւնը կատարուած է թէ մի սեռին և թէ զանազան սեռերին պատկանեալ անձանց մէջ: Եղբայրանալու ձէսը կայանում է հետևեալում: Զատիկի օրը, պատարագից յետոյ, երկու անձինք, որոնք եղբայրանալու են, միմեանց ձեռքերը բռնած համբուրում են անտարանը և փոխադարձ խօստում տալիս՝ իրենց վերայ վերցնել եղբօր կամ քրոջ (նայած սեռին) պարտաւորութիւնները և մինչև ի մահ այդ կատարել: Այլ տեղերում եղբայրակցութեան ծիսակատարութեան միջոցին, ծակում են իրանց ճկոյթ մատերի ծայրերը և փոխադարձաբար ծծում միմեանց արիւնն: Այս եղանակով եղբայրացածները կոչուած են անտարանի եղբայր կամ ողջոյն եղբայր: <sup>1)</sup> Ինչպէս տեսնում ենք, եղբայրակցութեան սովորութիւնը մեզանում այժմ եկեղեցական ազդեցութեան է ենթարկուել և ժողովրդի աչքում արդէն մի սրբագործուած կարգ է համարուած:

## VI

Պետական ու քաղաքացիական կեանքի զարգացմամբ վրիժառութիւնը, իբրև ինքնազուլիս և ինքնակամ պատ-

<sup>1)</sup> Зѣлинскій. Народно—юридическіе обычаи Закавказскихъ армянъ. Երես 6.

ժական միջոց, որ գործ էր արժուած յետապնդող վրիժառուն սերագործի դէմ, համարուած է այլևս հասարակական անգորրութիւնը խանդարող հանգամանք: Եւ քանի որ պետական ներկայացուցիչների վրայ էր ընկած հասարակական անգորրութեան պահպանելու պարտականութիւնը, բնականաբար միջոցներ էին ձեռք առնուած վրիժառութեան իրական երևոյթները կատեցնել ու վերացնել: Այդ նպատակին էին ծառայում նախ այսպէս անուանած հաշտութեան պահանջը (Friedensgebot) մի միջոց, որ շատ ընդհանրացած էր միջնադարեան գերմանական իրաւունքներում և երկրորդ՝ ավաշխարանքը: Վերջինս գործարուած էր բացառապէս հոգեւոր իշխանութիւնների կողմից, որոնք հալածուած էին վրէժխնդրութեան սովորութիւնն իբրև քրիստոնէական վարդապետութեան հակառակ մի երևոյթ և որոնք հիմնուելով կանոնական իրաւունքի սկզբունքի վրայ՝ *ecclesia non sitit sanguinem*, խստիւ արգելում էին՝ փոխադարձ թշնամութիւնից դրդուած արիւն թափել: Այնուամենայնիւ, չը նայած այդ ձեռնարկած միջոցներին, վրէժխնդրութեան սողին շարունակուած է պահպանել իւր գոյութիւնը թէև արդէն այլ ձևերով: Արեան վրէժի սովորութիւնը, վերայիշեալ երկու միջոցների շնորհիւ աստիճանաբար փոխարկուած է կոմպոզիցիոն սխտեմի, կամ մասնակի վճարելի փրկանքների: Այդ փրկանքը հայ ժողովրդի մէջ, նմանապէս հայ դատաստանագրքերում, յայտնի է բնորոշ արևան զին անունով և հոմանիշ է միջնադարեան գերմանական *werqeld*-ին, կամ ռուսական ГОЛОВНИЧЕСТВО-ին: Փրկանքը՝ փոխարինելով արեան վրէժխնդրութիւնն, անպայման ու անբաժան կցորդ է հաշտութեան պահանջին և ավաշխարանքին, երկու միջոցների, որոնց շնորհիւ նա կարող էր իւր նշանակութիւնը պահպանել:

Հաշտութեան պահանջն ու կայացումն շատ հետաքրքրական է Կիլիկիայի հայերի մէջ և մեծ նմանութիւն ունի ուրիշ ժողովրդների մէջ կատարուող նոյնանիշ

հաշտութիւնների ձևերի հետ. օրինակ՝ օսերի կամ միջնադարեան գերմանացիների <sup>1)</sup>: Կիրիկիայի հայերի հաշտութիւնն այսպէս է նկարագրուում: «Եթէ մէկը մարդ մ'սպանէ, ժամանակ անցնելէ յետոյ հաշտարարք առ տէրըն սպանելոյն գիմելով ներօգութիւն կը խնդրեն և կանխաւ հաճութիւնն ստանալէ յետոյ՝ պատուաւոր թաղեցւոց հետ միանալով մարդասպանը նորա տունը կտանին. սոյն պարագային մէջ սերագործն 7 կանգուն կտաւ կը առնու իւր հետ իբր պատանք և յորժամ մերձենայ սպանելոյ տան՝ դուխը կը փարտէ և նորա տիրոջ ոտից փարելով կ'ըսէ. «հասիկ իս՝ հասիկ պատօնքիս, չեքք կուզիս էրձ, որոյ կը պատասխանէ՝ «բոն՝ բչ պետը էնը, չեքք էր էատ զահմեթնու. քեչիցիր». նմանօրինակ փոխանակեալ խօսքերէ յետոյ՝ հաշտարարք վերստին կը թախանձեն, որ վերջապէս կը ներէ—«բոն իմ տեղէաս իս, պիտը սպաննըէանը՝ բոն չեմ էնի էալը բսելով. Յետոյ գինի կը հրամցնեն և սպանիչը իւր հակառակորդին բաժակ մը գինի տալով ձեռքն կը համբուրէ, այսպիսեօք և ի հնումն մի քանի հատ փոստայի (Ձէյթունցւոց կոչկեանուն), խոնձ և առառաւելն 1000 դահեկանի չափ դրամ տալով՝ խնդիրն կը վերջանայ եղէր, բայց մի քանի տարիէ ՚ի վէր փոխարինութեան կամ տուգանաց դրամն աստիճանաբար առաւելած է <sup>2)</sup>»:

Ապաշխարանքը՝ իբրև եկեղեցական մի կանոն, ինչպէս երևում է, մեծ գործառնութիւն է ունեցել հայ ժողովրդի մէջ սպանութիւնների դէպքերում. զոնէ այդպէս են ցոյց տալիս մեզ հասած պատմական տեղեկութիւնները: Մեր եկեղեցական ամենահին կանոնների մէջ, որոնք վերագրուում են Թաղէոս Առաքեալին, սահմանուում է այնպիսի անձնաւորութեան համար շոր կամօք մարդ

<sup>1)</sup> М. Ковалевскій—Современный обычай и древний законъ т. II. стр. 10 և 11. նմանապէս Frauenstädt—Feiderecht und Blutrache երես 127-128.

<sup>2)</sup> Ալլահվերդեան—Ուլնիա կամ Ձէյթուն.

սպանանէ, տասն և հինգ ամ ընդ ունկնդիրս կացցէ, մի ամ ընդ ձեռամբ, և յերս անձին իւրոյ հազորդեացիս. <sup>1)</sup> Այնուհետեւ մեր բոլոր եկեղեցական կանոնադրքերի մէջ ապաշխարանքը, իւր մի քանի տեսակներով, գառնում է պատիժները գերակշռող եղանակ. նոյն իսկ Մխիթար Գոշի Վատաստանագիրքն հայոց ապաշխարանքին, իբրև պատժական մի միջոցին, նախամեծար տեղ է սահմանում, Մխիթար Գոշի Վատաստանագրքի մէջ ապաշխարանքը անբաժան է փրկանքի վճարումից. առաջինը տեղի է ունենում, երբ արեան գինը վճարուած է: Ղի յորժամ սպանողի և կամ այլ շարագործի կրկին ցուցանէ պատիժս, քննել արժան է, զի յորժամ զգին արեանն առցեն, թեթեւ ապաշխարութիւն լիցի (II, ՃԻՁ, եր. 438): ԲՅէպէտ արեամբ դնոյ վճարել կարծի, մի արասցեն առանց ապաշխարութեան . . . (ibid): Արսն միայն, որ Մխիթար Գոշը մեզ ոչ մի տեղեկութիւն չի տալիս, թէ ինչ ձևով էին կատարում ժողովրդի մէջ փրկանքի վճարն ու ապաշխարանքը. այդպիսի տեղեկութիւն մեր ներկայ արժարժուած հարցի համար մեծ կարևորութիւն կ'ունենար:

Հաշտութեան և սրա հետ վճարուող փրկանքի եղանակը, որի օրինակը բերած էր Ջէյթունցիների կեանքից, կրում է իւր վրայ բացառապէս մասնաւոր, անձնական բնաւորութիւն: Այդ գէպքում իրաւարանական յարաբերութիւնները հիմնուած են ինքնապաշտպանութեան, ինքնագլուխ գործողութեան զգացմունքի վրայ: Մինչդեռ երբ պետական իշխանութիւնն սկսում է միջամտել սպանութեան գործերին և արիւնալի ընդհարումներին, այն ժամանակից կոնֆլիկտների անձնական յատկութիւնն աստիճանաբար փնջւում է, տեղի տալով իրաւարանական-հասարակական բնաւորութեանը: Ընդհարուող և վրնասուող կողմերն արդէն յենւում են ոչ թէ իրենց ինքնագլուխ գործողութիւնների, այլ հասարակական-պետական

<sup>1)</sup> Աբէլ արքեպ. Մխիթարեանց—Պատմութիւն ժողովոց Հաստանեայց եկեղեցւոյ. երես 16.

ներկայացուցիչների օրինական միջամտութեան վրայ: Դատաստանական իրաւասութիւնը, լինի դա աշխարհական կամ հօգեւոր, դառնում է մի տեսակ միջնորդ սպանողի և սպանուածի ազգականների միջև, մի միջնորդ թէ քրէական և թէ քաղաքացիական ընաւորութիւն կրող սճարագործների և սոցա զօհերի միջև. . . Այդ իրաւասութիւնն, բացի ապաշխարանքից ու հաշտութեան պահանջի միջոցներից, որոնք հակառակորդ կողմերին լոկ բարոյական բաւականութիւն են տալիս, պահպանեց նաև փրկանքի անբաւարար սովորութիւնն, իբրև մի միջոց միատեսակ կողմերի նիւթական բաւականութիւնը հատուցանելու համար: Շատ հետաքրքիր են Մխիթար Գոշի Դատաստանագրքի որոշումները, որոնք միանգամայն լոյս են սփռում Դատաստանագրքի այն յօդուածների վրայ, որոնք վերաբերում են քրէական իրաւունքին: Այդտեղ աչքի են զարնում իրաւաբանական գծեր, որոնք իրենց վրայ կրում են ժողովրդի մէջ գոյութիւն ունեցած վրէժխնդրութեան սովորութեան հետքերը: Այդ հետքերը երևում են մահուան դատաստանի, այնուհետև ius talionis և վերջապէս փրկանքի վճարումի՝ արեան զնի սովորութեան մէջ:

Եւս առաւել ուշագրութեան արժանի են վերջին յիշածները, քանի որ Մխիթար Գոշի Դատաստանագրքը, և ընդհանրապէս հայկական իրաւունքը, առգորուած է հիներբայական իրաւունքի սգով, և շաա բան իւրացրել է Մովսիսական օրէնքներից: Մովսիսական իրաւունքն, ինչպէս յայտնի է, ընդունում է բազմազան, առամն ընդ առամանս սկզբունքը: Իսկ փրկանքը համարում էր դատապարտելի և մի քանի շնչին գէպքերն ՚ի բաց առեալ նոյն իսկ ամօթալի և մեղապարտ երևոյթ: 1) Հետեւաբար Մխիթար Գոշի Դատաստանագրքը, չը նայած քրէական մասում, բացառապէս Մովսիսական օրէնքների գրոշմն է կրում, այնուամենայնիւ իւր մէջ պարփա-

1) Saalschüts- Das mosaische recht, H Qeil, cap. 72.

կուժ է զուտ ժողովրդական, տեղական ազդեցութիւնն էլ, դա փրկանքի ներկայութիւնն է: Այդ փրկանքը մի կողմից, ինչպէս վերը տեսանք, խորթ է հին-երբայական իրաւունքին և միւս կողմից չի համապատասխանում նմանապէս եկեղեցական կանոններին, որոնք ինքնըստինքեան հասկանալի կերպով իրենց ազդեցիկ նշանակութիւնն ունեցել են Մխիթար Գոշի վրայ: Ուրեմն այդ փրկանքի գոյութիւնն ժողովրդի մէջ և նրա իւրացումն Գառաստանագրքի կողմից մի նոր ապացոյց է, որ հին ժամանակներից 'ի վեր հայերի մէջ տիրապետել է արեան վըրէժի սովորութիւնն: Սակայն Մխիթար Գոշի Գառաստանագրքի մէջ գտնուում է մի այլ փաստ, որ կրկին մեզ առիթ է տալիս այդտեղ արեան վրէժի իրաւունքի հետքերը տեսնելու:

Մխիթար Գոշը իւր նախագրութեան Ե. գլխում պաշտպանում է այն դաշափարը, թէ՛ «երեք են որով վարին մարդիկ—չար, բարի և միջակ: Արդ՝ որ յայտնի բարի մարդիկ են և չբարկեն զքե, նոցա չէ պիտոյ դատաստան. և ոչ որ յայտնի չարք են՝ զոքք կամ աւաղակք. այլ որ միջակն են՝ որ ունին դատախազութիւն կամ կարծեօք իրաւ: Պարզ է, որ բարի մարդիկ դատաստանի չեն ենթարկուում: Բայց ինչու չար դորձերն էլ չպիտի ենթարկուին դատաստանի: Մխիթար Գոշի կարծիքով դատաստանը միայն միջակներէն համար է, այնպիսիների համար, որոնց գործողութիւնները գեռ անյայտ են, արդեօք չար թէ բարի. հետևապէս անհրաժեշտ է պատժի ենթարկել, թէ արդարացնել, մի խօսքով որտեղ տակաւին կարիք է զգացուում մեղաւորութիւնը գեռ ևս քննելու և հաստատելու: Չար գործերը, ինքնըստինքեան աշխարայ չար, պարզ ու անփոփոխ լինելով, կարօտ չէին դատաստանի: Սակայն այստեղից չի կարելի եզրակացնել, որ այդ չարագործները անպատիժ էին մնում: Ընդհակառակը Մխիթար Գոշի խօսքերից տրամաբանօրէն հետևում է, որ չարագործները պատժուում են, բայց ոչ դատաստանի կողմից, վասն զի

չար գործերը գտնուում էին դատաստանի իրաւասութիւնից դուրս, այլ պատժուում էին անկասկած առանց որևէ դատի, հենց ֆրաս կրօնիների կողմից: Այստեղից երևում են ինքնապաշտպանութեան, սճրագործի վրայ ինքնազուլի դատ անելու մնացորդ հետքերը. դա—այն միջոցներն են, որոնցով բնորոշուում էր իրաւաբանական յարաբերութիւնների անձնական յատկութիւնը, միջոցներ, որոնք վրէժխնդրութեան դաղափարի հետեւանքներն էին:

Վերջապէս մի կէտ ևս, որ կրկին մատնանիչ է անում վերայիշեալի նման իրաւաբանական յարաբերութիւնների մնացորդ հետքերի վրայ՝ մարդասպանի կամ՝ որևէ չարագործի վրայ ինքնազուլի դատաստան կատարել, միջոցներ ձեռք առնել անձամբ նրան պատժելու, մի խօսքով վրէժխնդիր լինել: Այդ կէտը՝ վճռաբեկ ատեանի բացակայութիւնն է: Ինչպէս հայերի, նոյնպէս և այն ժողովրդների մէջ, որոնք կանգնած են իրաւաբանական զարգացման ստոր աստիճանների վրայ, գոյութիւն չունէր դատաստանի վճռի դէմ բողոք բարձրացնելու կամ վճիռը բեկանել տալու իրաւունքը, բացակայ էր ius appellationis. Երայց մի ոք մեզ գիցէ նոցա որ տկամայ սխալին, իսկ որ կամաւ թիւրէ զդատաստան՝ ինքն մնայ ի դատապարտութիւն վերին դատաստանին: (Մի. Գոշ Դատ. հայոց դ. Ե.): Այստեղ դատաստանի դաղափարը իւր զարգացման առաջին աստիճաններից տակաւին չի բարձրացել. ոչ թէ դատաւորը կամ պետական-վարչական ներկայացուցիչներն են դատի կանչում, այլ հակառակորդներն են իրար դատաստանի հրաւիրում, որտեղ դատաստանական գործը վերջացնում են անմիջապէս միանգամից. վասն զի դատաստանական բոլոր գործողութիւնները, վկաների ցուցմունքները, ապաստանութիւնն ու պաշտպանութիւնն և այլն անում էին առանց որևէ ձեւականութիւնների հենց իրենք հակառակորդները, իսկ դատաստանն լսի վերջնական վճիռն էր արձակում: Դա մի մնացորդ է հին, նախնական դատաստաններից, որտեղ հակառակորդ կողմերը իրենց

արդարութիւնն պաշտպանելու համար դիմում էին մեծամարտութեան հենց դատաւորների առաջ, ինչպէս օրինակ հին գերմանացիների (zweikampf), սլաւ ցեղերի մէջ, Այդ մեծամարտութիւնը հիմնուած էր այն գաղափարի վրայ թէ խախտուած իրաւունքի հետապնդողը, կամ անձնական իրաւունքից փախուցուածը պէտք էր ինքնապաշտպանութեան դիմէր, պէտք էր ինքնագլուխ իւր դատը տեսնէր: Վերջապէս վճռաբեկ տեսանի բացակայութիւնն մի մնացորդ է այն դատարանի, որ հակառակող կողմերը իրենց պատիժը տեսնում էին հենց դատատանի միջոցին և դատաւորների ներկայութեամբ, ինչպէս մենք այդ գտնում ենք նախնի հայերի մէջ, հիմնուելով Բարդեղանէսի վկայութեան վրայ (Նւսերիօսի եկեղեց, պատմ. սոյն ներկայ գրութեան 7-8 էր.):

Մինչև այստեղ ջանացինք քննութեան առնել Մխիթար Գոշի Դատաստանագրքի մէջ գտնուած կէտերը, որոնց հիման վրայ գալիս ենք այն եզրակացութեան, որ յիշեալ Դատաստանագիրքը զերծ չի մնացել վրէժխնդրութեան գաղափարի ազդեցութիւնից, Գուցէ վրէժխնդրութեան սովորութիւնը Մխիթար Գոշի ժամանակները իրականապէս գոյութիւն ունէր ժողովրդի խաւերում, թէև ժխտուած պետական-վարչական մարմիններից, սակայն այդ իրաւաբանական սովորութեան նշանակութիւնն այնքան ազդեցիկ է եղել, որ հայկական ամբողջ քրէական իրաւունքն սնուել, աճել է այդ աշխարհայեացքի հետեւանքներով. նոյն իսկ ականայ տեղ է գտել վարչական մարմինների կողմից կիրառուած հայ դատաստանագրքերում: Այս ընդհանուր տեսական ակնարկից յետոյ դիմենք փաստերին, որոնք կարող են լուսաբանել, թէ ինչ եղանակներով էր ըստ Մխիթար Գոշի Դատաստանագրքի գործադրուում մահուան պատիժը, ius talionis-ը և փրկանքը՝ արեան գինը—վրէժխնդրութեան գաղափարի այդ մնացորդները:

## VII.

Թէև Միխիթար Գոշի կարծիքով զգին արեան մարդուն ըստ արժանւոյ դնոյ ոչ է, զի գործ Աստուծոյ է և պատկեր և յարուցանել միայն Աստուծոյ է մեռեալը, այնուամենայնիւ նա դնում է արեան դնի մի շափ, որ հաւասար է 365 դահեկանի, մարդու կեանքի դին, որը հաշոււմ է մարդկային կեանքի մի տարուայ օրերի թուով: Այս գումարը նայած հանդամանքներին աւելանում է կամ նուազում. այդ գումարի շափի մէջ մեծ դէր է խաղում քնասուածի հասարակական դիրքը՝ ըստ աշտիճանաց յաւելցի (Մխ. Գ. Ա.), շնրա կրօնը, կամ սճրագործութեան եղանակը: Նոյնանման երևոյթ ենք նկատում միջնադարեան գերմանական իրաւունքի մէջ: Գերմանական sachsenspiegel օրինագրքում (III, 45, § 1) մի սմբողջ յօդուած իրեն նիւթ է առել արեան դնի (wergeld) քանակը զանազան հասարակական դասակարգերի վերաբերմամբ:

Մահուան պատիժն ու talionը ներկայացնում են իսկապէս միևնոյն պատժի՝ այսինքն հաւասար փոխադարձ վարձադրութեան՝ դազափարի զանազան աստիճանները: Չնայած այդ երկու տեսակի դազափարի ներքին մեռկութեան, այնուամենայնիւ անհրաժեշտ է այստեղ ծանօթանալ նոցա հետ, իբրև պատժական առանձին տեսակների հետ:

Ա. Սպանութիւնների դէպքերում Գատաստանադիրքը զանազանում է նախ և առաջ՝ ղիտատրեալ՝ կամաւ և ակամայ մօմենտներ (Մխ. Գոշ, յօդ. Ա) և երկրորդ՝ ոճրագործի անձնատրութիւնն:

1. Իսկ եթէ սպանանիցէ այլազգի զքրիստոնեայ կամաւ, ըսպանցի փոխանակ նրա, ապա թէ ակամայ, իրատիցի 'ի ձեռս և զգին արեան տուգանեսցի (Մխ. Գոշ—ձժէ): Այստեղ երկրորդ դէպքում, ինչպէս նկատելի է,

բացի արեան գնի վճարումից, կտրոււմ են ոճրագործի ձեռքը: Այդ տեսակ ձեռք կտրելուն մէջ մարմնանում է հաւասար վրէժխնդրութեան դադափարը, որ կոչուի անուով պահանջուած է, վրէժն ուղղած տեսնել ոճրագործի և իսկապէս նրա մարմնի այն մասի դէմ, որը անմիջական պատճառ է եղել հակառակորդի սպանման: Դա էլ talionի մի եղանակն է, մի մնացորդ սերնդական վրէժխնդրութիւնից:

2. Եթէ քրիստոնեայ զայլազգի սպանցէ կամաւ, զգին արեանն տուգանեացի հարիւր քսան և երկու դահեկան (այսինքն ամբողջ արեան գնի  $\frac{1}{3}$  մասը) և եթէ ակամայ—վախուսն և մի դահեկան ( $\frac{1}{6}$  մասը ամբողջ արեան գնի):

3. Եթէ քրիստոնեայ զքրիստոնեայ սպանցէ կամաւ, զգինն տուգանեացի արեան. և թէպէտ ըստ օրինացն մահու արժանի է, այլ 'ի ձեռս խրատ առեալ ապաշխարութեան հասցէ: Ապա թէ ակամայ—զկէս գընոյն, այսինքն մօտ 187 դահեկան, բայց չեն կտրուած ձեռքը:

4. Հետաքրքիր են սպանութեան դէպքերը փոքրահասակների վերաբերմամբ. Սպանութիւն 'ի մանկունս եղեալ եթէ որ սպանն 'ի վեր քան զերկրտասան ամն է—իրբ կատարեսուլ արին լիցի և ըստ այնմ տուգանեացի: Եթէ փոքրահասակը 12 տարեկանից էլ ցածր է, օրինակ 10 կամ 11 տարեկան է, պահանջել արեան գնի կէսը. եթէ 10 տարեկանից էլ փոքր է—տուգանել արեան գնի մի երրորդը (Մխ. Գ. յօդ. Ա.)

Սպանութեան սնիրների շարքն է դատուած և նոյն պատժական հայեացքով չափուած կուտութեան բռնի խախտումը և կանանց բռնաբարութիւնը: Այս տեսակ շարագործութիւնները տուգանուած են արեան գնի ամբողջութեամբ և նոյն իսկ շատ անգամ աւելի չափով. օրինակ՝ կոյսի առեանդումն և բռնաբարումն հատուցուած էր 1000—600 դահեկանով: Կանանց պատուի վրայ կատար-

բաժ սճիրները խստօրէն պատժուում էին ըստ ժողովրդների օրէնքներում, ինչպէս օր. միջնադարեան գերմանացիների, հին իսրայելացիների, հին եգիպտացիների մէջ: Նմանապէս Վախտանգի Գատաստանագրքի հայկական օրէնքների մէջ գտնուում է մի յօդուած, որ ձայնում է. եոզ նշանուած օրիորդին կը խարէ և կուսական պատիւը կը խախտի, նրանից պահանջել ամբողջ արեան գինն յօգուտ օրիորդի նշանուած երիտասարդին. իսկ օրիորդին կնութեան տալ նրա բռնարարողին, եթէ վերջինս ազապ է, իսկ եթէ վերջինս արդէն ամուսնացած է, այն ժամանակ գտնէ պահանջել նրանից օրիորդի կուսութիւնն խախտելու պատճառով միմիայն արեան գինն: (Законы Вахтанга изд. Френкеля, Тифлисъ § 231, стр. 291):

Բ. Talion-ի մասնակի ձևերը գտնուում ենք այն դէպքերում, երբ մի կողմը հակառակորդի մարմնի որևէ անդամին շոշափելի վնաս է հասցնում, օրինակ՝ ձեռքից զրկում, աչքը կուրացնում, ոտքը կտրում. մազերը փետում և այլն: Այսպիսի դէպքերում իւրօքանչիւր վնասուած անդամն առանձին է դնահատուում և ըստ այնմ արեան գինն վճարում. ւտուգանք վճարեցի ըստ բունականի գնոյ արեան համեմատելու: Վնասուած մասնի համար վճարելիք փրկանքը չափուում է միջին քանակութամբ և ընդունուում իբրև նորմ՝ չքսան և վեց դահեկան և կէս դանդ, գարի պակաս: Բացի այդ՝ Գատաստանագիրքը շեշտում է, որ վնասի չափ ու աստիճանն որոշելու համար, անհրաժեշտ է քննութեան առնել և ըստ այն էլ talion-ի քանակը որոշելու (Մխ. Գոշ. յօդ. ԻԹ.) Talion-ի իրաւունքն այն աստիճանի է ընդլայնանում, որ վնասուած կողմին վճարում էին նաև այն ծախքերը, որոնք կատարել էին յաշմացած տնդամների բժշկութեան և դեղորայքի համար. և և զայսն ՚ի վնասից բժշկութեան և զխափանածոյն հատուցեն և յանբժշկելեաց — ըզտուգանս (Մխ. Գոշ. յօդ. ԺԴ, ԻԶ): Talion-ի այս օրինակ՝ համանիշ սովորութիւնը գոյութիւն է ունեցել ոչ միայն

հին մովսիսական օրէնքներում, այլ և հին ու միջնադարեան գերմանացիների մէջ<sup>\*)</sup>: Talion-ի գաղափարը գործադրուում էր նաև այնպիսի հանգամանքներում, երբ նիւթական ու մարմնական վնաս հասցնողը՝ չորքոտանի կենդանի էր: Այս գէտքերում, ՚ի հարկէ, պատասխանատու էին կենդանիների տէրերը, վասն զի վերջինների պարտաւորութիւնն էր հսկել իրենց կենդանիների վրայ, մանաւանդ եթէ դոքա կատաղի կամ վնասարեւ էին (Մխ. Գոշ ԺԳ. ԼԱ.):

Նմանապէս է վարուում Դատաստանագիրքը գողերի հետ: Երբ գիշերուայ մէջ գողը իւր գողութեան միջոցին սպանուի վնասուողի կողմից, այդ սպանութիւնը համարուում է անկամայ, իսկ եթէ լոյսին կատարուէր այդ սպանութիւնը, այն ժամանակ համարուում էր կամատր և գողի սպանողին հետ պէտք էր վարուել ընդհանուր օրէնքի համաձայն, այն է՝ գոհանալ արեան գնի հատուցումով: Ինչ վերաբերում է այն գողին, որ զերծ է մնացել վնասուած սեփականատիրոջ հալածանքից, այնուամենայնիւ նա պէտք է որոնուի և գտնուի իշխանութեան կամ հենց վնասուածի ջանքերով: Եւ ապա այդ ձերբակալուած գողն ենթարկուում է պատժի, վճարում է գողացած իրերի համար տուգանք, փրկանքի բնաւորութիւն է կրում, այն է՝ «գողոնն կորուսեալ՝ չորրորդ հատուցի, և ոչ կորուսեալն՝ կրկին» (Մխ. Գոշ ԺԹ, ԻԳ, ԼԹ, Խ.):

Վերև յիշուած արեան գնի բոլոր եղանակները, և անձնական իրաւունքի խախտման վերականգնելու բոլոր ձևերը, որոնց վրայ կանգ է առնում Մխիթար Գոշի Դատաստանագիրքը, գործադրելի են ոչ միայն ազատ դասակարգին պատկանողների, այլ և նոյն չափով շինական ու ճորտացած բնակիչների վերաբերմամբ. (Մխ. Գոշ յօդ. ԻԷ, Լ):

Մի քանի խօսք էլ տեսնք, թէ ինչպէս էր վճարում

<sup>\*)</sup> Համեմատ. Ttauenstädt—Tebderecht und Blutrache երես 26.

արեան գինն: Տարաբաղաբար մեր Դատաստանագիրքը շատ վայրիվերոյ է արժարժում այս հարցը: Մինչդեռ այդ հարցը հայ սովորութեան իրաւունքի հետադատողի համար նշանաւոր է և հետաքրքիր, փրկանքի հատուցման եղանակների հիման վրայ կարելի էր յետադարձ միջոցով որոշ եզրակացութիւններ անել վրէժխնդրութեան սովորութեան վրայ լոյս սփռելու նպատակով:

Ի՞նչու չկայ, որ արեան գինը հասնում է սպանուածի ամենամօտիկ ազգականներին՝ հայր, մայր, որդի և այլն: Սակայն, ինչպէ՞ս Դատաստանագրքից նշմարոււմ է, մի որոշ մաս էլ այդ տուգանքից հասնում էր յօգուտ դանձարանի կամ թագաւորի. եղգինն տուգանեցի արեան իւրոցն և թագաւորի տուգանք ըստ կարի լիցի: Ահա այստեղ նկատոււմ ենք արեան վրէժի էփօլիւցիօնի վերջնական աստիճաններից մէկը, երբ պետական իշխանութիւնն իւր միջամտութեամբ որոշ դեր է խաղում հակառակ կողմերի յարաբերութիւնների մէջ, և այսպիսով վրիժաւու անձանց անձնական գոյն կրող կօնֆլիկտը ենթարկոււմ է հասարակական դժի ազդեցութեանն ու պատասխանատուութեանը, Բայց երբ սպանողը անկարող է հատուցանել արեան գինը՝ Այն ժամանակ ըստ Դատաստանագրքի պահանջոււմ է, որ նա պատճառեցի և սպանելոյն հատուցի և տունն յաւար արքունիս լիցի: կամ մի այլ տեղ՝ ասպա թէ ազքատ իցէ, վաճառեցի իւրօվին յազգատոհմ և հատուցանիցէ:

Միտի՞մար Գոչը նախատեսնում է նաև այնպիսի դէպքեր, երբ սպանողներն անյոյտ են: Մովսիսական օրէնքն (Բ. օրին. ԻԱ. 1, 2, 3,) այսպիսի հանգամանքներում պահանջում է՝ «եւցէ ձերակոյան քո և դատաւորք քո, և չափեացեն շուրջ զփրաւորան զվայրս քաղաքացն. և եղիցի քաղաք որ հուպ իցէ ՚ի վիրաւօրն առցէ ձերակոյտ քաղաքին անօրիկ երինջ մի յարկառոյ...» Մեր դատաստանագիրքն հակառակ սրան պահանջում է՝ «յայսմանն յայտ է ոչ տուգանս լինել այդպիսի սպանման և ոչ դատաստան

արեան, այլ քաւութեան—պատարագաւ անգ և աստ (այսինքն զիակի ընկած որոշ տարածութեան վրայ գտնուած ընակութեան տեղերի մէջ) ապաշխարութիւն: Այդոցիկ հետեւելի է դատաւորաց որքան անյայտ է: Իսկ եթէ ըստպանողն անսպասելի յայտնուի, այն ժամանակ ՚ի հարկէ նրա հետ վարուելու էր, ինչպէս ընդունուած էր դատաստանագրքի ոգով արեան գնի և ապաշխարանքի ենթարկել (Մխ. Գոշ յօդ. ԿԸ): Միտիժար Գոշի Դատաստանագրքի այս վերջին գէպքին վերաբերեալ որոշումը զարմանալի նմանութիւն ունի գերմանական միջնագրքեան իրաւունքին, որ խօսում է նոյնանման գէպքի մասին: Այդ յօդուածը վերագրում են K. Chlodwig I. Մերովինգեան թագաւորին. ընթէ գիակը ընկած է դաշտի վրայ կամ երկու տեղերի (ընակեալ) միջև, պէտք է ազգականներին բերել այդտեղ և գիակը ցոյց տալ, որպէսզի հաստատուի, որ նոցա ազգականի գիակն է: Երբ այդ չի կատարուում, այն ժամանակ նոյն տեղերի բնակիչները պարտաւոր են երգում տալ, թէ ոչ իրենք են կատարել այդ սպանութիւնն և ոչ էլ տեղեակ են, թէ ով է սպանողը, հակառակ գէպքում նոքա ստիպուած կրկինեն արեան գինը վճարելը <sup>1)</sup>։

Մենք աշխատեցինք քայլ առ քայլ հետեւել վրիժառութեան գաղափարի զօրգացմանը հայոց սօվորութեան իրաւունքի մէջ: Մենք տեսանք, որ այդ սօվորութիւնն ամենահին ժամանակներից ի վեր անցել է մինչև նորագոյն ժամանակները: Մի կողմից՝ նա անցել է որպէս առաջնորումն էլ գոյութիւն ունեցող ժողովրդական իրաւարանական հասկացողութիւն, իւր գաղափարի կռակա արտայայտութեամբ և գրեթէ անփոփոխ՝ որպէս ինքնահատուցման իրական միջոց, անձնական ինքնօգնութեան ու պաշտպա-

<sup>1)</sup> Chlodovechi K. capitula pacto legis Salicae addita c. 9, b. pertz. Momsen T. IV, p. 5.

նութեան մի եղանակը Միւս կողմից՝ նա հասել է մեզ որոշ էջօլիւցիօնի, որոշ հասարակական յարաբերութիւններէից բղխած պայմաններին ենթարկուած. այստեղ վրէժխնդրութիւնը, չկորցնելով իւր էական դազափարն ու ոգին, ներմուծուել է հայկական քրէական իրաւունքի մէջ ասորերէր ձեւերով ու պատմական ժամանակին համեմատ զարգացմամբ Այդ քրէական իրաւունքը, որի հետ համառօտապէս ծանօթացանք Մխիթար Քոչի դատաստանագրքից, հայկական իրաւաբանական աշխարհայեացքում կազմուած է վրէժխնդրութեան սովորութեան զարգացման վերջին աստիճանը։ Մխիթար Քոչից յետոյ մենք չենք ունեցել մի այլ ինքնուրոյն օրինագիրք կամ դատաստանագիրք, որով կարելի լինէր չափել հայկական իրաւաբանական զարգացման յետագայ աստիճանները վրէժխնդրութեան ու արեան գնի վերաբերմամբ։

